Գոհար Խաչատրյան
Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ, դասախոս
Էլ. հասցե՝ goharaknkhachatryan@gmail.com
Էդգար Ամիրխանյան
Եվրասիա միջազգային համալսարանի ռազմավարական զարգացման և արտաքին կապերի գծով պրոռեկտոր
Էլ. հասցե՝ edgar.amirkhanyan@eiu.am
Ստելլա Չանդիրյան
«Փոփոխություն» սոցիալ-առողջապահական ՀԿ-ի գենդերային և հակախտրականության հարցերով իրավաբան, Եվրոպական և միջազգային համեմատական իրավունքի մագիստրոս
Էլ. հասցե՝ stella.chandiryan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.2-243

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Հոդվածը տեսական և պրակտիկ մակարդակներում հիմնավորում է, որ տեղեկատվության մատչելիությունը ոչ միայն ինքնուրույն իրավունք է, այլ նաև կրթության, անկախ կյանքի և համայնքում ներառման իրավունքների իրացման հիմնարար նախապայման՝ փոխադարձ ազդող կապերով: Այս հիմքով ուսումնասիրվել են թեմատիկ միջազգային կարգավորումները, մատչելիության չափորոշիչներն ու ՀՀ ստանձնած պարտավորությունները ամփոփող իրավաքաղաքական փաստաթղթերը, ինչպես նաև կատարվել է հանրային նշանակության պետական կայքերի (կրթական հաստատություններ, տե-

ղական ինքնակառավարման մարմիններ) նախնական ուսումնասիրություն: Արդյունքները համալրվել են «Արդյո՞ք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար Հայաստանում» հետազոտության տվյալներով, ինչպես նաև մասնակցային փորձարկմամբ (user testing), ինչը հնարավորություն է տվել մասնակցային ձևաչափով նկարագրել տեղեկատվական խոչընդոտների և իրավունքների իրացման միջև գործնական կապերը:

Թեև չի իրականացվել համազգային խորքային գնահատում, խառը մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տվել վերհանել Հայաստանի իրավական ու պրակտիկ կարգավորումները, կատարված քայլերն ու բացերը, ներառյալ՝ թեմատիկ հանրային քննարկումների, մատչելիության չափորոշիչների իրավակիրառ մեխանիզմների, ինչպես նաև կրթական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ավելի գործուն մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը:

Հոդվածը եզրակացնում է, որ միայն միջոլորտային և համալիր իրավական ու գործնական քայլերի միջոցով է, որ մատչելի տեղեկատվությունը վերածվում է գործնական ուղու՝ կրթության իրավունքի, անկախ կյանքի, համայնքում ներառման, զբաղվածության և հարակից իրավունքների լիարժեք իրացման համար:

Հիմնաբառեր. մատչելի տեղեկատվություն, մարդու իրավունք, անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունք, ներառական կրթություն, թվային մատչելիություն, կրթության իրավունք:

Ներածություն

Մատչելի տեղեկատվությունը, հատկապես թվային դարաշրջանում, առանցքային գործոններից մեկն է, որը պայմանավորում է մարդու առօրյան կազմակերպելու հնարավորությունները, հաղորդակցությունը պետական ու ոչ պետական կառույցների հետ, ինչպես նաև սեփական իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին իրազեկվածությունը: Այն անկախ կյանքի, համայնքում և կյանքի տարբեր բնագավառներում մասնակցության, ներգրավվածության և իրավունքների իրացման նախապայման է:

Պատմականորեն տեղեկատվական խոչընդոտները համակարգային կերպով սահմանափակել են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, զբաղվածության, առողջության իրավունքները, ինչպես նաև անկախ կյանքն ու համայնքային ներառումը. տեղեկատվության անմատչելիությունը փաստացի զրկում է անձին կրթության, աշխատանքի, առողջապահական ծառայությունների և համայնքային կյանքին մասնակցելու հնարավորությունից:

Թվայնացման արդի ժամանակաշրջանում, երբ հանրային հաղորդակցությունն ու ծառայությունների զգալի հատվածը տեղափոխվել են վեբ կայքեր և թվային հարթակներ, տեղեկատվության մատչելիության խնդիրը դար-

ձել է առանցքային: Մատչելիությունը վաղուց չի սահմանափակվում «ֆիզիկական միջավայրի» (շենք–շինություն, տրանսպորտ) քննարկումներով, այլ նաև տարածվում է տեղեկատվության ու հաղորդակցության ոլորտների վրա՝ ընդգծելով փոխկապվածությունը: Քանի որ մատչելիությունն այլ իրավունքների իրացման և իրավահավասարության ապահովման նախապայման է, դրա բացակայությունը պետք է դիտարկվի նաև խտրականության համատեքստում՝ որպես իրավունքի իրացման արգելք, ոչ թե՝ լոկ տեխնիկական թերացում:

ՄԱԿ–ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ոչ միայն պարտավորեցնում է պետություններին բացահայտել ու վերացնել արդեն իսկ գոյություն ունեցող մատչելիության խոչընդոտներն ու արգելքները, այլև ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները՝ բացառելու այդպիսի պայմանների, խոչընդոտների ու արգելքների հնարավոր առաջացումը հետագայում (հոդված 9, մաս 2):

Այս պարտավորությունները ստանձնել է Հայաստանը 2010թ.–ին վավերացնելով Կոնվենցիան, ուստի հարկ է ուսումնասիրել Հայաստանում տեղեկատվության մատչելիությանն առնչվող իրավական կարգավորումները, դրանց համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին՝ միաժամանակ վերլուծելով պետական կայքերի մատչելիության ապահովման պրակտիկաները (ՏԻՄ պաշտոնական կայքեր, կրթական համակարգերի կայքեր և այլն):

Սույն հոդվածն արձագանքում է այդ հարցերին՝ ելնելով հիմնական թեզից, որ տեղեկատվության մատչելիությունը ոչ թե զուտ տեխնիկական չափորոշիչների խնդիր է, այլ՝ մարդու իրավունքների իրացման նախապայման, առանց որի Հայաստանում անհնար է լիարժեքորեն իրացնել կրթության, անկախ կյանքի և համայնքում ներառման իրավունքները:

Մեթոդներ

Հայաստանում թեմայի շուրջ ակադեմիական ու քաղաքական քննարկումները դեռևս սակավ են: Այդ պատճառով իրականացվել է նախնական, հետախուզական ուսումնասիրություն՝ սահմանելու թեմայի հայաստանյան շրջանակը և քարտեզագրելու տեղեկատվության մատչելիության ու մյուս իրավունքների (կրթություն, ՏԻՄ–երին մասնակցություն, զբաղվածություն, համայնքում ներառում) փոխադարձ կապերը, որոնք էլ ձևակերպվել են որպես ուսումնասիրության հիմնական բաղադրիչներ:

Չնայած ուսումնասիրությունը չի ներկայացնում համազգային, խորքային գնահատում, խառը մեթոդաբանությունը (տվյալների հավաքագրման տարբեր եղանակների համադրում) հնարավորություն է տվել հստակեցնել այն խնդիրները, որոնք պահանջում են հետագա խորքային ուսումնասիրություն, արձանագրել հաջողված փորձերն ու կիրառական բացերը և ստեղծել հայալեզու տեղեկատվական հիմք հետագայում ավելի ներկայացուցչական հետազոտությունների, ինչպես նաև քաղաքական ու կազմակերպական լուծումների ձևակերպման համար:

Իրականացվել է՝

- Իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն՝ նկարագրելու թեմայի իրավական հենքը, հիմնավորելու տեղեկատվության մատչելիության առանցքային լինելը և դրա փոխկապակցվածությունը մյուս իրավունքների հետ, համադրելու միջազգային ստանդարտներն ու Հայաստանի ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև արձանագրելու իրականացված քայլերն ու կիրառության բացերը: Ուսումնասիրվել են միջազգային փաստաթղթերը (Կոնվենցիան, Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ №2 և №5), մատչելիության միջազգային ընդունված չափորոշիչները (WCAG 2.1/2.2), ինչպես նաև ներպետական իրավական ակտերը (ՀՀ Սահմանադրություն, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին, ներառական կրթությանը, տեղական ինքնակառավարմանը մասնակցությանը և մատչելիության պահանջներին առնչվող օրենսդրական ակտեր), ուղեցույցներ և ոլորտային նյութեր:
- Կայքերի նախնական ուսումնասիրություն (արագ, ոչ խորքային գնահատում)՝ դիտարկելու կրթական ոլորտում միջազգային կայքերի փորձը և ներկայացնելու ներառականության, կրթության ու հետագա զբաղվածության հնարավորությունների և տեղեկատվական մատչելիության փոխադարձ կապերն ու ազդեցությունները:
- Տեղեկատվության երկրորդային վերլուծություն՝ իրավական արդյունքները պրակտիկայի հետ համադրելու և մասնակցային տվյալներով համալրելու նպատակով:
- Վերլուծության մեջ ներառվել են համահեղինակներից երկուսի իրականացրած «Արդյո՞ք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար» հետազոտական զեկույցի արդյունքները: Այս մասնակցային ուսումնասիրությունը հնարավորություն է տվել նկարագրելու տեղեկատվական խոչընդոտների և համայնքային մասնակցության փոխկապակցվածությունը՝ մի կողմից, ամփոփելով ք. Երևանի և Արարատ, Կոտայք, Լոռի մարզերի ՏԻՄ-երին ուղղված տեղեկատվական հարցումների արդյունքները, իսկ մյուս կողմից՝ վերհանելով հոգեկան և/կամ մտավոր առողջության խնդիրներ ունեցող 48 անձանց դիտարկումները՝ ՏԻՄ կայքերի, հաղորդակցության եղանակների և ընդհանուր մատչելիության վերաբերյալ: Զուգահեռաբար, հետազոտական թիմը նույն համայնքների պաշտոնական կայքերն ու հիմնական սոցիալական հարթակները ուսումնասիրել է մատչելիության տեսանկյունից:

Արդյունքներ

Արդյունքները ներկայացվում են երեք փոխկապված ուղղությամբ. առաջինը՝ մատչելիության միջազգային չափորոշիչների սահմանումն ու դրանց նորմատիվ հենքը ՀՀ-ում, երկրորդը՝ կրթության համակարգում տեղեկատ-

վության մատչելիության ազդեցությունը, և երրորդը՝ համայնքում ներառումը՝ ՏԻՄ մարմինների կայքերի մատչելիության ուսումնասիրման համատեքստում:

Արդյունք 1. Մատչելի տեղեկատվությունը՝ միջազգային չափորոշիչների շրջանակում և ՀՀ նորմատիվ կարգավորումները. Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցները (WCAG), որոնք մշակվել են Համացանցի կոնսորցիումի Վեբ մատչելիության նախաձեռնության (W3C) կողմից, հաստատված են որպես միջազգային ստանդարտ: Այսինքն՝ դրանք մատչելիության ապահովման ոչ միայն տեխնիկական ուղեցույցներ են, այլ նաև միջազգային չափորոշիչներ, որոնք առաջարկում են երեք մակարդակներ «A», «AA», «AAA»:

Աղյուսակ 1. Մատչելիության մակարդակների համեմատական նկարագիրը

Մակարդակ	Պահանջների բնույթը	Կիրառումը՝ կայքէջերի օրինակով	Կիրառումը՝ տեսանյութերի օրինակով
«A»	Նվազագույն պահանջներ	կայքէջի բոլոր գործառույթները ամբողջությամբ հասանելի են նաև միայն ստեղնաշարի միջոցով	տեսանյութին համատեղ առկա է տեքստային տարբերակ՝ transcript
«AA»	Հիմնական պահանջներ	կայքի գլխավոր մենյուն և որոնման դաշտը միշտ գտնվում են նույն տեղում՝ անկախ նրանից, թե օգտվողը որ էջում է	բոլոր տեսանյութերին կցված են ենթագրեր, որոնք փոխանցում են ոչ միայն խոսքը, այլև կարևոր ձայները՝ օր.՝ երաժշտություն, ծափահարություններ
«AAA»	Առավելագույն պահանջներ	Տեքստերը պարզ և հասկանալի լեզվով են	տեսանյութերը պարունակում են ոչ միայն ենթագրեր, այլև ժեստերի լեզվի թարգմանություն և մանրամասն աուդիո նկարագրություն

Այս ուղեցույցները պարբերաբար թարմացվում են. 2025 սեպտեմբերի դրությամբ կիրառվում է «WCAG 2.2»-ը (որը փոխարինել է «2.0» և «2.1»-ին), և նախանշվում է «WCAG 3»-ի թողարկումը:

ՀՀ կարգավորումների համադրությունը ցույց է տալիս, որ 2023 թ. ընդունվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիության խթանման և իրազեկվածության բարձրացման ուղեցույցը հաստատելու մասին» հրամանը՝ նոր թվային ծառայությունների համար

առաջարկելով համապատասխանեցում **«WCAG 2.1» «AA»** ստանդարտին:

Հատկանշական է, որ նախարարի հրամանին նախորդել է 2022-ին մշակված և «e-draft» հարթակում քննարկված «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը, սակայն, չի ընդունվել:

Այս հիմքով պետք է արձանագրել, որ որքան էլ նախարարի հրամանը կարևոր առաջընթաց է, այն ունի ավելի ցածր իրավաբանական ուժ, քան կունենար նույն հարցը կարգավորող կառավարության որոշումը: Բացի այդ, հրամանը չունի պարտադիր իրավաբանական ուժ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար: Փոխարենը՝ դրա բովանդակությունն առավելապես նկարագրողական է, ինչը կարող էր ընդունվել ոչ թե որպես ոլորտը կարգավորող հիմնական ենթաօրենսդրական ակտ, այլ օժանդակ բնույթ ունեցող տեղեկատվական նյութ՝ հաջորդելով ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունմանը:

Արդյունք 2. Կրթության իրավունքի իրացումը և տեղեկատվության մատչելիության կապը. Կրթության ոլորտում տեղեկատվության մատչելիությունն ընդգրկում է ուսումնական նյութերի, կառավարման համակարգերի և հաղորդակցության ուղիների հասանելիությունը բոլոր ուսանողներին՝ անկախ մտավոր, ֆիզիկական, շարժողական, հոգեկան և այլ կարողություններից: Այն դրսևորվում է մի քանի մակարդակներում.

Ներառական կրթության հիմք. առանց տեխնոլոգիական լուծումների, ուսումնական գործընթացը դառնում է անմատչելի, ոչ ներառական, ինչը հանգեցնում է մեկուսացման և կրթական անհավասարության (Seale, 2013):

- Ակադեմիական առաջընթացի երաշխիք. երբ ուսանողը կարողանում է ինքնուրույն օգտագործել ռեսուրսները, բարձրանում է նրա ակադեմիական բարեվարքությունը: Մատչելիությունը վերացնում է «լրացուցիչ խոչընդոտները» և թույլ է տալիս կենտրոնանալ բովանդակության յուրացման վրա (Burgstahler & Cory, 2008):
- Ունիվերսալ դիզայնի սկզբունքի կիրառում. տեղեկատվության մատչելիությունը «ունիվերսալ դիզայնի» գործնական դրսևորումն է, երբ ռեսուրսները նախագծված են բոլորի համար: Սա կարևոր է ոչ միայն հաշմանդամություն ունեցող ուսանողների համար, այլև բարելավում է ուսումնական փորձը բոլորի համար (CAST, 2018):

Տեղեկատվության մատչելիության և կրթության իրավունքի իրացման կապն ամրագրված է նաև Կոնվենցիայով, որտեղ ի հավելում տեղեկատվության մատչելիությանն առնչվող հոդվածներին, հոդված 24-ով ընդգծվում է ներառական կրթության անհրաժեշտությունը և պետությունների պարտականությունը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող ուսանողների արդյունավետ մասնակցությունը՝ ներառյալ համապատասխան տեխնոլոգիաների և ուսուցողական նյութերի մատակարարումը:

Սա վառ արտահայտված է միջազգային կրթական առաջատար համալսարանների ստանդարտներում. օրինակ, Մասաչուսեթսի տեխնոլոգիական

ինստիտուտը և Հարվարդի համալսարանը իրենց «OpenCourseWare» նախագծերում մանրամասնորեն հետևում են Վեբ-բովանդակության մատչելիության ուղեցույցներին (WCAG 2.1 AA մակարդակ)՝ ապահովելով, որ դասախոսությունների նյութերը, տեսանյութերն ու դասագրքերը մատչելի լինեն (MIT Open Learning, 2023): Այս առումով, Բրիտանական «Open University»-ն առաջատարն է՝ առցանց կուրսերի և պլատֆորմների մատչելիության բարձր մակարդակի շնորհիվ:

Այս առումով կարևոր քայլ է Հայաստանի բարձրագույն կրթության օրենքը (2022 թ.), որը ներառական կրթությունը հռչակում է որպես հիմնական սկզբունք (հոդված 4) և սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, ներառյալ՝ մատչելի ձևով տեղեկատվության և հաղորդակցության ստացման իրավունքը (հոդված 38): Այս իրավունքի իրացումը հնարավոր է, եթե ի թիվս մի շարք այլ գործողությունների, բուհերը ապահովեն ուսումնական նյութերի և կառավարման համակարգերի մատչելիությունը՝ համաձայն միջազգային ստանդարտների:

Արդյունք 3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվության մատչելիությունը և համայնքում ներառման փոխադարձ կապը. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության առաջնային երաշխիքը առանց խտրականության տեղեկատվության ստացումն է: Թեպետ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն առանձին հոդվածով չեն սահմանում, թե համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանման ներքո համայնքն ինչ հստակ գործողություններ պետք է կատարի, այնուամենայնիվ նույն օրենքների մի շարք այլ հոդվածներում անդրադարձ է կատարվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը: Մասնավորապես, նշվում է, որ համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինի տեղեկություն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումների վերաբերյալ, սակայն օրենսդիրը չի ճշտում, թե «մատչելիության առկա լուծումներ» ասելով ինչ է կոնկրետ նկատի ունենում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՏԻՄ համացանցային կայքերը շարունակում են լինել ոչ լիարժեք մատչելի հաշմանդամություն ունեցող անձի համար: Օրինակ՝ Սպիտակ համայնքի կայքէջում տեղադրված չէ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը: Մասիս համայնքի կայքէջում հասանելի է 2015 թվականին ընդունված կարգի միայն սկանավորած տարբերակը, ինչն արդեն իսկ դժվարացնում է փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալը՝ անհնարին դարձնելով այդ փաստաթղթում նույնիսկ որոնում կատարելը: Նույն կերպ՝ Աբովյան համայնքի կայքէջում 2022 թվականին ընդունված կարգը նույնպես տեղադրված է բացառապես սկանավորված ձևաչափով: Երևանի քաղաքապետարանի կայքէջում, թեպետ, առկա է 2014 թվականին ընդունված կարգի տեքստային տարբերակը, այնուհանդերձ կարգը գտնելու գործընթացը մատչելի չէ. այն տե-

ղադրված է ավագանու որոշումների պահոցում, ինչն էլ ենթադրում է, որ փնտրող անձն առնվազն պետք է իմանա, թե որ մարմնի կողմից և որ թվականին է այն ընդունվել, որպեսզի հնարավորինս «հեշտ» լինի այն գտնել: Հետազոտությանը մասնակցած հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես նշում են, որ իրազեկման գործընթացը, սոցիալական ցանցերում ներկայացված տեղեկատվությունը, տեքստերի բովանդակությունը, կիրառվող գույներն ու պատկերները, շարադրման ոճը ևս մատչելի չէ, ինչը մեծապես ազդում է համայնքային որոշումներից դուրս մնալու, զբաղվածության հնարավորություններին ծանոթ չլինելու, համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասը չդառնալու և այլ բացառող պրակտիկաներին:

Թեպետ տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ապահովեն մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար պարզ և մատչելի ձևով հաղորդակցվելու իրավունքը, այնուամենայնիվ ուսումնասիրության շրջանակում դիտարկված 4 համայնքների պաշտոնական համացանցային կայքերում հեռարձակվող հրապարակային նիստերը մատչելի չեն. ապահովված չէ նիստերի ժեստերի լեզվով թարգմանությունը, առկա չեն ենթագրեր, բացակայում է նաև հրապարակմանը զուգահեռ՝ քննարկվող հարցերի վերաբերյալ մատչելի, հիմնական կետերն ամփոփող տեսա կամ ձայնային ձևաչափով ներկայացվող տեղեկատվությունը: Մատչելի ձևաչափով չեն նաև ավագանու նիստերի արձանագրությունները:

Քննարկում

Սույն հոդվածի հիմնական նպատակն էր վերհանել և ներկայացնել, թե Հայաստանում ինչպիսի իրավական և գործնական շրջանակ է ձևավորված տեղեկատվության մատչելիության ապահովման ուղղությամբ, և ինչպես է այն փոխկապակցված հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, համայնքում ներառման և անկախ կյանքի իրավունքների իրացման հետ: Արդյունքները հստակորեն հաստատում են, որ մատչելիությունը ոչ թե լոկ տեխնիկական պահանջ է, այլ հիմնարար իրավունքի նախապայման և խտրականության բացառման կարևորագույն գործոն, ինչպես և ենթադրվել էր Ներածության մեջ՝ հղում կատարելով ՄԱԿ-ի Կոնվենցիայի դրույթներին: Խառը մեթոդաբանական մոտեցումը՝ իրավական փաստաթղթերի վերլուծության, կայքերի նախնական ուսումնասիրության և մասնակցային փորձարկման միջոցով, հնարավորություն տվեցին վերհանել թե՛ դրական տեղաշարժերը, թե՛ համակարգային կիրարկման բացերը:

Արդյունքները ցույց են տալիս, որ թեպետ վերջին տարիներին Հայաստանում որոշակի աշխատանքներ կատարվել են թվային միջավայրի մատչելիության ապահովման ուղղությամբ, այնուամենայնիվ պետական և տեղական ինքնակառավարման մի շարք մարմինների, ինչպես նաեւ տեխնոլոգիական, կրթական որոշ հաստատությունների կայքէջեր շարունակում են անմատչելի լինել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Միջազգային ստանդարտների և ազգային կիրառման համապատասխանությունը

Արդյունք 1-ը ցույց է տալիս, որ Հայաստանը նախարարի հրամանի հիմքով արձանագրել է «WCAG 2.1 AA» ստանդարտը՝ որպես վեբ մատչելիության խթանման ուղեցույցի հիմք, ինչը համահունչ է միջազգային պրակտիկային և Կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին: Չնայած սա կարևոր դրական տեղաշարժ է, որը բացակայում էր տարիներ շարունակ, սակայն առկա են երկու առանցքային խնդիրներ.

- Նախարարի հրամանն ունի ավելի ցածր իրավաբանական ուժ, քան կունենար նույն հարցի վերաբերյալ ՀՀ կառավարության ընդունած որոշումը: Նախարարի այս հրամանը չունի պարտադիր իրավաբանական ուժ ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար: Փոխարենը՝ դրա բովանդակությունն առավելապես նկարագրողական է, ինչը կարող էր ընդունվել ոչ թե որպես ոլորտը կարգավորող հիմնական ենթաօրենսդրական ակտ, այլ օժանդակ բնույթ ունեցող տեղեկատվական նյութ՝ հաջորդելով ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունմանը: Սա հաստատվում է նաև արդյունք 3-ում, որի համաձայն տեղական ինքնակառավարման կայքերը շարունակում են անմատչելի մնալ:
- Չնայած այն հանգամանքին, որ հրամանն ընդունվել է 2023 թվականին, և հիմքում դրվել է «WCAG 2.1» տարբերակը, այն դեպքում, երբ նույն տարում միջազգային հարթակում արդեն իսկ թարմացվել և հաստատվել է «WCAG 2.2» տարբերակը, որը 2025 թվականի սեպտեմբերի դրությամբ համարվում է վերջին թարմացված տարբերակը, սակայն այս առնչությամբ հրամանում որևէ փոփոխություն չի կատարվել 2023 թվականի մայիսից հետո: Սա կարող է հուշել, կիրարկման ոլորտում արագ արձագանքման և շարունակական մշտադիտարկման մեխանիզմների բացակայության մասին: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է սահմանել պարբերական վերանայման ընթացակարգ (օրինակ՝ տարեկան կամ կես տարին մեկ), հաստատել «WCAG 2.2 AA»-ին պարտադիր համապատասխանության շեմը կառավարության որոշմամբ և ներդնել տեխնիկական աուդիտների ու user testing-ի կայուն մեխանիզմ՝ թարմացում-կիրառում-վերահսկողություն շղթան փակելու համար:

Տեղեկատվական խոչընդոտների ազդեցությունը կրթության և համայնքային ներառման վրա

Արդյունք 2-ը՝ կրթության ոլորտի վերլուծությունը, հաստատում է հոդվածի հիպոթեզը՝ ցույց տալով, որ մատչելի տեղեկատվությունը կրթության իրավունքի իրացման ուղիղ նախապայմանն է: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» (2022 թ.) նոր օրենքը, որը ներառում է մատչելի ձևով տեղեկատվության ստացման իրավունքի մասին դրույթը, կրկին համահունչ է Կոնվենցիայի 24-րդ հոդվածին և միջազգային առաջատար բուհերի փորձին (MIT, Open University): Սակայն, ինչպես նշվում է, դրա իրականացումը

պահանջում է ռեսուրսներ, իրազեկվածություն և մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմներ, ինչը ենթադրում է, որ հարկավոր է իրավական հենքի պրակտիկ կիրառությանն ուղղված համակարգային գործողություններ՝ ուսումնական նյութերի բազմաֆորմատ մատչելիություն, կառավարման համակարգերի հասանելիություն, պարզ լեզվի կիրառում, ենթագրեր և աուդիո նկարագրություններ, ինչպես նաև հարմարեցված գնահատման գործիքներ: Այլ կերպ՝ առանց կազմակերպական և տեխնիկական կարողությունների ամրապնդման, օրենքի նորմատիվ ներուժը չի վերածվի ուսանողի առօրեական փորձի փոփոխության:

Արդյունք 3-ը վկայում է, որ ՏԻՄ մակարդակում առկա տեղեկատվական խոչընդոտները փաստացի սահմանափակում են համայնքային մասնակցության իրավունքը: Սկանավորված, ոչ որոնելի փաստաթղթերի տարածվածությունը (Մասիս, Աբովյան), մասնակցության կարգերի բացակայությունը կամ դժվար հայտնաբերման պրակտիկաները (Սպիտակ, Երևան), ինչպես նաև հրապարակային նիստերի ոչ մատչելի հեռարձակումը (առանց ենթագրերի, ժեստերի լեզվի թարգմանության և մատչելի ամփոփագրերի) ցույց են տալիս, որ նույնիսկ նվազագույն պահանջները չեն ապահովվում: Սա հակասում է ինչպես «տեղեկատվությանը առանց խտրականության մուտքի» պահանջին, այնպես էլ Կոնվենցիայի այն տրամաբանությանը, ըստ որի մատչելիությունը նախապայման է համայնքային կյանքի մեջ հավասար մասնակցության համար: Ավելին՝ ՏԻՄ կայքերի կառուցվածքային, նավիգացիայի և փաստաթղթերի մատչելի ձևաչափերի խնդիրները ամրապնդում են իրավական-կազմակերպական բացերը, որտեղ «իրազեկման» ձևական քայլերը իրականում չեն վերածվում հասկանալի և օգտագործելի բովանդակության:

Եզրակացություն

Հոդվածի արդյունքները հաստատում են, որ տեղեկատվության մատչելիության շուրջ քննարկումները մեկնարկել են և աստիճանաբար ընդգրկում են կրթության, ՏԻՄ-երի և հարակից ոլորտները, սակայն դեռ սակավ ու հատվածային են. թեև իրավական դաշտում արձանագրվել են միջազգային չափորոշիչներին համահունչ քայլեր (վեբ մատչելիության, կրթության, տեղական ինքնակառավարմանը մասնակցության և տեղեկատվության մատչելիությանն առնչվող իրավական կարգավորումներ), որոշ դեպքերում դրանց սահմանափակ իրավաբանական ուժը կամ իրավակիրառ մեխանիզմների բացը, բավարար ռեսուրսների պակասը, կամ մշտադիտարկման մեխանիզմների բացը շարունակում են վերարտադրել տեղեկատվական խոչընդոտներ: ՏԻՄ կայքերում տարածված սկանավորված ու ոչ որոնելի փաստաթղթերը, բարդ նավիգացիան և հրապարակային նիստերի ոչ մատչելի հեռարձակումները, ինչպես նաև բուհական ենթահամակարգում բազմաֆորմատ մատչելիության խնդիրները հակասում են Կոնվենցիայի պարտավորություններին և գործնականում հանգեցնում են խտրական հետևանքների՝ սահմանափակելով հաշմանդամություն ունեցող անձանց համայնքային

որոշումների կայացման գործընթացներին մասնակցությունը, ինչպես նաև կրթության, զբաղվածության և այլ իրավունքների իրացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունները:

Իրական մատչելիության ուղին պահանջում է համակարգային գործողություններ՝ կառավարության մակարդակով սահմանել պարտադիր նվազագույն շեմ՝ պարբերական թարմացումների ընթացակարգերով, անկախ տեխնիկական աուդիտով և մասնակցային user-testing, co-design ձևաչափով (հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական ներգրավմամբ)՝ զուգահեռ ամրապնդելով կարողությունները և ռեսուրսները և բյուջետավորումը: Միայն այս համակցված նորմատիվ, կազմակերպական և մասնագիտական մեխանիզմների գործարկմամբ տեղեկատվության մատչելիությունը կդառնա իրական, իսկ կրթության, համայնքային մասնակցության ու զբաղվածության իրավունքները՝ ամենօրյա փորձով իրացվող:

Օգտագործված գրականության ցանկ

Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենք, ընդունված 2025 թվականի սեպտեմբերի 11-ին, Միասնական կայք 2025.09.29-2025.10.12: Պաշտոնական հրապարակման օրը 10.10.2025, https://www.arlis.am/hy/acts/214346

Խաչատրյան, Գ., Չանդիրյան, Ս. (2023). *«Արդյո՞ք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար»*: Հետազոտական զեկույց: էջ 21-34 https://www.changengo.org/_files/ugd/b6cd86_cad0f7d933e448b8b4d6ad92ec3a1786.pdf

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի մայիսի 8-ի № 918-Ա հրաման, https://hightech.gov.am/images/Web-Content_Guide.pdf

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, ընդունված 2007 թվականի մարտի 30-ին, ՀՀԱԳՆՊՏ 2011.01.14/12(20) Հոդ.7, https://www.arlis.am/hy/acts/64762

Burgstahler, S., Cory, R. (2008). *Universal Design in Higher Education: From Principles to Practice. pp. 3-20,* Harvard Education Press.

CAST (2018). *Universal Design for Learning Guidelines version 2.2.* Retrieved from http://udlguidelines.cast.org

General Comment No. 2 – *Article 9: Accessibility,* § 1, (Adopted 11 April 2014). Retrieved from https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no-2-article-9-accessibility-0

ISO/IEC 40500:2025(en) *Information technology — W3C Web Content Accessibility Guidelines* (WCAG) 2.2, https://www.iso.org/obp/ui/en/#iso:std:iso-iec:40500:ed-2:v1:en

MIT Open Learning (2023). Accessibility of MIT OpenCourseWare. Retrieved from https://ocw.mit.edu/help/accessibility/

Seale, J. (2013). *E-learning and disability in higher education: Accessibility research and practice. pp. 21-40,* Routledge.

United Nations (2006). *Convention on the Rights of Persons with Disabilities* (CRPD). Article 9 and 24, Retrieved from https://www.un.org/development/desa/disabilities/con-

vention-on-the-rights-of-persons-with-disabilities.html
Web Content Accessibility Guidelines (WCAG) 2.2 W3C Recommendation 12 December 2024, pp. 3–9, and 32, https://www.w3.org/TR/WCAG22/

Гоар Хачатрян
Аспирант и преподаватель факультета социологии
Ереванского государственного университета
Эл. адрес: goharaknkhachatryan@gmail.com
Эдгар Амирханян
Проректор по стратегическому развитию и внешним связям
Международного университета Евразия
Эл. адрес: edgar.amirkhanyan@eiu.am
Стелла Чандирян
Юрист по вопросам гендера и недискриминации
социально-медицинской неправительственной организации «Изменение»,
магистр европейского и международного сравнительного права
Эл. адрес: stella.chandiryan@gmail.com

ДОСТУПНОСТЬ ИНФОРМАЦИИ КАК ПРЕДПОСЫЛКА РЕАЛИЗАЦИИ ПРАВ ЛЮДЕЙ С ИНВАЛИДНОСТЬЮ НА ОБРАЗОВАНИЕ И ВКЛЮЧЕНИЕ В СООБЩЕСТВО

В статье теоретически и практически обосновывается, что доступность информации является не только самостоятельным правом людей с инвалидностью, но и фундаментальной предпосылкой реализации их прав на образование, самостоятельную жизнь и включение в сообщество, находящихся во взаимозависимой связи. Исходя из этого, исследуются международные нормативные акты и стандарты доступности, правовые и политические документы, отражающие взятые Республикой Армения обязательства, а также проводится предварительный анализ официальных государственных веб-сайтов общественного значения (образовательных учреждений, органов местного самоуправления).

Результаты дополнены данными исследования «Являются ли процессы принятия решений на уровне общин инклюзивными для людей с инвалидностью в Армении», а также резальтатами пользовательского тестирования (user testing), что позволило в формате участия описать практические взаимосвязи между информационными барьерами и реализацией прав.

Хотя общенациональная углубленная оценка не проводилась, смешанный методологический подход позволил выявить правовые и практические механизмы, действующие в Армении, достигнутые результаты и существующие пробелы — включая необходимость более активных тематических общественных обсуждений, правоприменительных механизмов стандартов доступности, а также более эффективных инструментов со

стороны образовательных учреждений и органов местного самоуправления.

В статье делается вывод, что только посредством межсекторных и комплексных правовых и практических мер доступная информация может стать действенным инструментом для полной реализации прав на образование, самостоятельную жизнь, включение в сообщество, занятость и другие смежные права.

Ключевые слова. доступная информация, права человека, право на самостоятельную жизнь и включение в сообщество, инклюзивное образование, цифровая доступность, право на образование.

Gohar Khachatryan
Ph.D. Student and Lecturer of the Faculty of Sociology at Yerevan State University
Email: goharaknkhachatryan@gmail.com
Edgar Amirkhanyan
Vice-Rector for Strategic Development and External Relations at Eurasia International University Email: edgar.amirkhanyan@eiu.am
Stella Chandiryan
Lawyer on Gender and Anti-Discrimination Issues at "Change" Social-Healthcare NGO, Master of European and International Comparative Law
Email: stella.chandiryan@gmail.com

ACCESS TO INFORMATION AS A PREREQUISITE FOR REALIZING THE RIGHTS OF PERSONS WITH DISABILITIES TO EDUCATION AND COMMUNITY INCLUSION

The article substantiates, on both theoretical and practical levels, that access to information is not only a distinct right of persons with disabilities but also a fundamental prerequisite for the realization of the rights to education, independent living, and community inclusion—rights that are interrelated and mutually reinforcing. Based on this premise, the study examines relevant international frameworks, accessibility standards, and legal-policy documents outlining Armenia's obligations. It also includes a preliminary analysis of publicly significant state websites (educational institutions and local self-government bodies).

The findings are further supported by data from the research *"Are Community Decision-Making Processes Inclusive for Persons with Disabilities in Armenia?"* as well as participatory user testing, which made it possible to describe, in a participatory format, the practical links between informational barriers and the realization of rights.

Although a nationwide in-depth assessment has not been conducted, the mixed-method approach has allowed the identification of Armenia's legal and practical frameworks and practices, progress achieved, and existing gaps. These include the need for more consistent thematic public discussions, effective implementation mechanisms for accessibility standards, and the establishment of more proactive

measures by educational institutions and local self-government bodies.

The article concludes that only through cross-sectoral and comprehensive legal and practical measures can accessible information become an effective pathway for the full realization of the rights to education, independent living, community inclusion, employment, and other related rights.

Key words: Accessible information, human rights, right to independent living and community inclusion, inclusive education, digital accessibility, right to education.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. հունիսի 5-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. հունիսի 12-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: